Հավելված N 4
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 20-ի N 956 - Ն որոշման

# Ց Ա Ն Կ

## ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԷԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ

1. Սույն որոշման իմաստով շուտ փչացող գույք են համարվում՝

1) սննդամթերքը.

2) օծանելիքակոսմետիկական ապրանքները.

3) դեղորայքը, դեղամիջոցները, դեղանյութերը.

4) այն գույքը, որոնց համար սահմանված է պիտանիության ժամկետ և այդ ժամկետը կոմիտեի կողմից գույքը պահպանման վերցնելու կամ պահատվության կամ հանձնելու պահին արդեն սպառվել է:

2. Գույքը սույն հավելվածի 1-ին կետի որևէ ենթակետին դասելու և 1-ին կետի 1-4-րդ ենթակետերից որևէ մեկի հետ նույնականացնելու համար կոմիտեն կարող է հիմք ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 1681-Ն որոշման 2-րդ կետով նշված և ըստ լիազորված մարմնի դասակարգված արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում (ԱՏԳ ԱԱ) ներառված՝ նույն կետում նշված դասակարգիչները:

3. Սույն հավելվածի իմաստով՝ պահպանման էական ծախսեր պահանջող գույք են համարվում պահպանման հատուկ պայմաններ պահանջող, ինչպիսիք են խոնավության, չորության կամ ջերմաստիճանի որոշակի ռեժիմ պահանջող, դյուրավառ, շրջակա միջավայրին վնաս պատճառող գույքը, կենդանիները, ինչպես նաև այն գույքը, որն ունի այնպիսի ծավալ և քանակ, որոնց պահպանման համար ամսական անհրաժեշտ է կատարել 30 հազ. դրամը գերազանցող ծախս:

4. Սույն կարգի իմաստով՝ շուտ փչացող գույքին հավասարեցվում է նաև անհապաղ կամ շուտ իրացում պահանջող այն գույքը, որն իր շուկայական գնով իրացվելի է միայն հստակ ժամանակահատվածում, և այդ ժամանակահատվածն

անցնելուց հետո կորցնելու է իր արժեքը կամ այն էականորեն նվազելու է, օրինակ՝ համերգների, միջոցառումների տոմսերը, ավիատոմսերը և այլն:

**Ձև N 1**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N ___**

**ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

____ _____ 20....թ. _____

*կազմման վայրը*

Արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության

_____

*(աշխատակիցների պաշտոնը, անունը, ազգանունը)*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ____ _____20___թ. N_____ որոշման կարգավորումները, ինչպես նաև

_____

այն փաստաթղթերը, որոնք ուսումնասիրվել են գույքի հետ միաժամանակ

Իրականացրեցին հետևյալ գույքի ուսումնասիրություն.

| **Գույքի անվանումը** | **Գույքի մանրամասն նկարագիրը** | **Քանակը** | **Գույքի ուսումնասիրություն իրականացված լինելու դեպքում՝ ուսումնասիրության վայրը և ժամանակը** |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է

Գույքը ենթակա է տնօրինման հետևյալ եղանակով

_____

Հետևյալ պատճառաբանությամբ

_____

_____ _____

(եզրակացությունը կազմող անձի անունը, ազգանունը) (ստորագրություն)

**<u>Ձև N 2</u>**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N __**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

____ _____20__թ. _____

*կազմման վայրը*

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի

_____

*(աշխատակիցների պաշտոնը, անունը, ազգանունը)*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ____ _____20___թ. N_____ որոշման N 1 հավելվածի 12-րդ և 14-րդ կետերը,

_____

___-ից (-ին) (համապատասխան պետական մարմնի անվանումը, այն հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, ով համապատասխան պետական մարմնից հանձնում է տվյալ գույքը) ժամանակավոր պահպանության վերցրինք (հանձնեցինք) հետևյալ գույքը.

| **Գույքի անվանումը** | **Գույքի մանրամասն նկարագիրը** | **Քանակը** | **Այլ նշումներ** |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

Գույքը վերցնելու վայրի հասցեն է _____

_____

Գույքը վերցնելու ժամանակը և այլ հանգամանքներ

_____

_____ _____

(գույքը հանձնող անձի անունը, ազգանունը) (ստորագրություն)

_____ _____

(գույքն ստացող անձի անունը, ազգանունը) (ստորագրություն)

**Ձև N 3**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**____ _____20___Թ. N_____ ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾԻ**
**ՀԻՄԱՆ ՎՐԱ ԳՈՒՅՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ**

202...թ. ———ի ————թիվ ——— հրամանով ստեղծված հանձնաժողովը, մասնակցությամբ.

Քարտուղար՝

Անդամներ՝

1. ————————————————————————————————————

2. ————————————————————————————————————

3. ————————————————————————————————————

4. ————————————————————————————————————

թիվ--- հրամանի հիման վրա __ _____ի _____թ., ժամը ___-ին _____ հասցեում, _____ եղանակով ոչնչացրեց սույն արձանագրությունում նշված, հետևյալ գույքը.

| **NN ը/կ** | **Գույքի անվանումը** | **Գույքի համառոտ նկարագիրը** | **Քաշ կամ չափման այլ միավոր** | **Այլ նշումներ** |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Հանձնաժողովի անդամներ _____

Ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ